ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | թիվ 8 | *Տեսակը* | Հիմնական |
| *Տիպը* | Կարգադրություն | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | Չի հրապարակվել | *Ընդունման վայրը* | Երևան |
| *Ընդունող մարմինը* | Եվրասիական միջկառավարական խորհուրդ | *Ընդունման ամսաթիվը* | 20.05.2016 |
| *Ստորագրող մարմինը* | Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ | *Ստորագրման ամսաթիվը* | 20.05.2016 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 20.05.2016 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

# ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԱԳԾԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

20 մայիսի 2016 թվականի **թիվ 8** քաղ. Երևան

## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԱԳԾԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում ապրանքների հետագծելիության մեխանիզմի ձեւավորման նպատակով՝

1. Ի գիտություն ընդունել Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միության) անդամ պետությունների մաքսային տարածքում ապրանքների տարանցիկ փոխադրման դեպքում մաքսային մարմինների տեղեկատվական համակարգերի օգտագործմամբ դրանց տեղաշարժի հետագծելիությունն ապահովելու մասին տեղեկատվությունը:

2. Միության և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի անդամ պետությունների կառավարություններին՝ մինչև 2016 թվականի հոկտեմբերի 1-ը պատրաստել Միության անդամ պետությունների՝ Միության մեջ ապրանքների հետագծելիությունն ապահովող մեխանիզմի ներդրման մասին միջազգային պայմանագրի նախագիծ:

Նախագծի մշակման ժամանակ հիմք ընդունել այն, որ ապրանքների հետագծելիության մեխանիզմը պետք է հիմնվի ապրանքների հետագծելիությունն ապահովող ազգային համակարգերի վրա, որոնք ապահովում են Միության անդամ պետությունների իրավասու (լիազոր) պետական մարմինների միջև առևտրային շրջանառության մեջ գտնվող ապրանքների մասին տեղեկատվության փոխանակումը:

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդին՝ մինչև 2016 թվականի հուլիսի 1-ը սահմանել ապրանքների հետագծելիության ապահովման մեխանիզմի ստեղծման հիմնական մոտեցումները, այդ թվում՝ իրագործման փուլերը, հասկացութային ապարատը և Միության անդամ պետություններում գործունեության առանձնահատկությունները՝ հաշվի առնելով տարածքային առանձնահատկությունները, ապրանքների հետագծելիության և տեղեկատվական փոխգործակցության սկզբունքները, ինչպես նաև հետագծելիության ենթակա ապրանքների կատեգորիաները:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա ստորագրման օրվանից:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Հայաստանի Հանրապետությունից** | **Բելառուսի Հանրապետությունից** | **Ղազախստանի Հանրապետությունից** | **Ղրղզստանի Հանրապետությունից** | **Ռուսաստանի Դաշնությունից** |